ՊՈԼՈՆԻՈՒՄԻ ԵՎ ՌԱԴԻՈՒՄԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄԸ

Պիեռ Կյուրիի կինը՝ Մարիա Կյուրին, իր հետազոտությունների սկզբում կարևոր հայտնագործություն է կատարում: Նա պարզում է, որ ուրանի հանքանյութը շրջակա օդն ավելի շատ է էլեկտրականացնում, քան նրա մեջ պարունակվող ուրանն ու թորիումը: Այդ փաստից նա եզրակացնում է, որ ուրանի հանքանյութում առկա է ավելի մեծ ճառագայթակտիվություն ունեցող մի անհայտ տարր:

Համոզված լինելով կնոջ այդ վարկածը ոչ միայն ճիշտ է, այլև շատ կարևոր, Պիեռը թողնում է իր սեփական հետազոտությունները, որպեսզի օգնի կնոջը՝ առանձնացնելու այդ տարրը: Դրանից հետո ամուսինները սկսում են աշխատել միասին:

Երկարատև աշխատանքից հետո նրանց հաջողվում է անջատել առավել մեծ ճառագայթակտիվությամբ օժտված նյութի ոչ մեծ քանակություն: Պարզվում է, որ այն պարունակում է երկու ճառագայթակտիվ տարր: Դրանցից մեկին ամուսիններն անվանում են պոլոնիում՝ ի պատիվ Մարիա Սկլադովսկայայի հայրենիքի՝ Լեհաստանի: Մի քանի ամիս անց նրանք հայտարարում են երկրորդ տարրի հայտնագործության մասին. այն անվանում են ռադիում:

ԱՐԺԵՔՆԵՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Երբ Նոբելյան մրցանակակիրներ Մարիա և Պիեռ Կյուրիները անգլիացի ֆիզիկոսների հրավերով ժամանեցին Լոնդոն, նրանց պատվին պաշտոնական խնջույք կազմակերպվեց: Մարիան անթաքույց հետաքրքրությամբ դիտում էր ներկա ազնվատոհմ կանանց զարդերը: Հանկարծ նա նկատեց, որ նույնն անում է նաև Պիեռը:

Վերադառնալով հյուրանոց՝ Մարիան հարցրեց ամուսնուն նրա տարօրինակ վարքի մասին, ինչին Պիեռը պատասխանեց.

— Չիմանալով ինչով զբաղվել՝ ես հաշվում էի, թե քանի հիանալի գիտական լաբորատորիա կարելի է կառուցել ճաշկերույթի մասնակից յուրաքանչյուր կնոջ զարդարանքներով: